ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ <<ՁՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/1>>

Զարենցավանի համայնքապետարանի կարիքների համար **մետաղական աղբարկղերի** ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ՁՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/1>>** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **2018 թվականի հոկտեմբերի 12-ին և 15-ին** ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ **2018 թվականի հոկտեմբերի 16-ին** տրամադրված պարզաբանումները:

Հարցադրում N 1: Ձեր կողմից հրապարակված աղբարկղերի տեխնիկական բնութագիրը թերի է, խնդրում եմ ավելի կոնկրետ նշել աղբարկղերի տեխնիկական բնութագիրը.

Պարզաբանում N 1: Պարզաբանում տրամադրվում է հրավերի բովանդակության շրջանակներում, ուստի Ձեր կողմից կատարված հարցմանը պարզաբանում կտրամադրվի այն դեպքում, երբ հստակ նկարագրված կլինեն մատնանշված թերությունները.

Հարցադրում N 2: Տեխնիկական բնութագրում նշված չէ ինչ անկյունակներից է հավաքվելու և հիմքի չափերը բացակայում են, եթե հնարավոր է ներկայացրեք աղբարկղի նախագիծը.

Պարզաբանում N 2: Մետաղական աղբարկղերը պատրաստվելու են 45 մմ անկյունակներից, հիմքի չափսերն են՝ 80x80սմ: Հրավերով և սույն պարզաբանմամբ ներկայացված տեխնիկական բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռք բերվող գնման առարկան, ուստի գտնում ենք, որ աղբարկղի նախագիծ ներկայացնելու անհրաժեշտություն չկա.

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **<<ՁՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/1>>** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար **Պ. Գաբրելյանին:**

Հեռախոս՝ **0226-4-34-34:**

Էլեկտրոնային փոստ՝ **qaxgnumner@mail.ru**:

<<ՁՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով